

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ԷԹԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Մշակվել է Բարձրաստիճան դասնասար անձանց
էթիկայի հանձնաժողովի կողմից)

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը (GIZ) զարգացող երկրների հետ իրականացվող համագործակցության համար ամբողջ աշխարհում ծառայություններ մատուցող ձեռնարկություն է: Որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության մասնավոր տնտեսական կազմակերպություն՝ GIZ-ն իր գործունեությամբ հետապնդում է զարգացող երկրների աջակցությանն ուղղված Հարավի և Արևելքի երկրներում մարդկանց կենսապայմանները տևականորեն բարելավելու և կյանքի բնական հիմքերը պահպանելու քաղաքական նպատակը:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձնարարությամբ դատաիրավական բարեփոխումներին նպաստող մի քանի ծրագրեր է իրականացնում Հարավային Կովկասի երկրներում: Այդ ծրագրերի շրջանակում այս երկրներ են գործուղվում միջազգային երկարաժամկետ և կարճաժամկետ փորձագետներ, որոնք ի թիվս այլ միջոցառումների խորհրդատվություն և որակավորման բարձրացման միջոցառումներ են իրականացնում: Բացի այդ՝ Ընկերությունը օժանդակում է նոր օրենքների կիրառման վերաբերյալ տեղացի փորձագետների աշխատանքների հրատարակմանը:

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH ist ein weltweit-tätiges Dienstleistungsunternehmen für Entwicklungszusammenarbeit. Sie arbeitet als privatwirtschaftlich organisiertes Unternehmen der Bundesrepublik Deutschland für das entwicklungspolitische Ziel, die Lebensbedingungen der Menschen in den Ländern des Südens und Ostens nachhaltig zu verbessern und die natürlichen Lebensgrundlagen zu erhalten.

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH führt im Auftrag des deutschen Bundesministeriums für wirtschaftliche Zusammenarbeit und Entwicklung (BMZ) in den Ländern des südlichen Kaukasus mehrere Projekte zur Unterstützung der Rechts- und Justizreformen durch. Im Rahmen dieser Projekte werden internationale Lang- und Kurzeitexperten eingesetzt, die unter anderem beratende Tätigkeiten ausüben und Fortbildungsveranstaltungen durchführen. Weiter werden Publikationen von lokalen Experten zur Anwendung der neuen Gesetze unterstützt.

© Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH,
2016 Hrsg.:

giz

Programm: Rechtliche Annäherung an europäische Standards im Südkaukasus
Baghramyan Str. 4/1

0009 Jerewan, Armenien

T +374 10 540981

F +374 10 569496

E lusine.baghdasaryan@giz.de

www.giz.de

ISBN 978-99941-0-744-5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Էթիկայի համակարգի խթանման սարրերը	
1.1. Թափանցիկություն, հանրային իրազեկվածություն և հանրային մասնակցություն	7
1.2. Հասարակական կազմակերպություններ	11
1.3. Չանգվածային լրսվամիջոցներ	12
1.4. Կոռուպցիայի մասին իրազեկում	14
1.5. Պաշտոնատար անձանց վերադասրասում կոռուպցիայի դեմ ղայրարի և էթիկայի թեմաներով . .	15
2. Էթիկական վարագծի խթանման ինստիտուցիոնալ գործիքները	
2.1. Աշխատանքի ռոսացիա	17
2.2. «Չոռս աշխի» սկզբունք	19
2.3. Մոնիթորինգ և հսկողություն	20
2.4. Առաջնորդություն, թիմային աշխատանք և հաղորդակցություն	20
2.5. Բողոքների/առաջարկությունների արկղ	21
3. Էթիկական վարագծի չափորոշիչները	
3.1. Բարեվարության, հարգալից վերաբերմունքի և անկողմնակալության սկզբունքները հանրային ծառայության ոլորտում	23
3.2. Ըահերի բախման իրավիճակները	24
3.3. Պաշտոնեական դիրքի, հանրային ռեսուրսների և տեղեկատվության օգտագործումը	26
4. Էթիկային առնչվող դեղքեր	27

Ներածություն

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը սույն ձեռնարկը մշակել է Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) փորձագիտական և խորհրդատվական աջակցությամբ՝ հաշվի առնելով հանրային ոլորտում էթիկական վարքագծի ձևավորման և ներդրման կարևորությունը: Այն նպատակ ունի ծառայելու որպես ուղեցույց և խորհրդատվություն բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների համար, ինչպես նաև աջակցելու էթիկայի դասընթացներ անցկացնողներին:

Հանրային ոլորտում ծառայությունը սկսվում է համաձայնությամբ, որ պետք է ենթարկվել և հետևել էթիկական վարքագծի չափորոշիչներին, երկընտրանքային իրավիճակներում դրսևորել էթիկական վարքագիծ, տեղեկացված լինել հանրային ոլորտում էթիկական խթանելու գործիքների մասին, ինչպես նաև պատասխանատու զգալ պետական հաստատությունների հանդեպ վստահություն ձևավորելու համար:

Ձեռնարկը նպատակ ունի դառնալու հանրային ծառայություն ոլորտում վարքագծի չափորոշիչների ձևավորման և տարածման գործիք, ինչպես նաև էթիկային առնչվող երկընտրանքային իրավիճակների լուծումներ գտնելու ուղեցույց: Այն ունի առանձնահատուկ ու գործնական ձևաչափ և ներառում է էթիկայի խնդիրներ պարունակող իրական դեպքեր:

Այս փաստաթուղթը կազմելիս կիրառվել են պարզ ձևակերպումներ և եզրույթներ, որպեսզի այն ընկալելի լինի յուրաքանչյուր օգտվողի համար:

Հուսով ենք՝ ձեռնարկը հանրային ոլորտում առավել արդյունավետ ծառայելու խթան կհանդիսանա:

1. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԹԱՆՄԱՆ ՏԱՐԲԵՐԸ

Արդյունավետ ազգային էթիկայի համակարգի ձևավորումը պահանջում է կարևոր տարրերի (ցանկն այս փաստաթղթում սպառնիչ չէ) առկայություն, այդ թվում՝ ուժեղ քաղաքացիական հասարակություն, թափանցիկություն և հանրության մասնակցություն հանրային քաղաքականության քննարկումներում և որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաև հանրային ծառայության ոլորտում բանիմաց կադրերի առկայություն՝ երաշխավորելու հանրային ծառայության համակարգի արդյունավետ գործունեությունը:

1.1 Թափանցիկություն, հանրային իրազեկվածություն և հանրային մասնակցություն

Էթիկայի գործիքները դարձել են միջազգային չափորոշիչների բաղկացուցիչ մասը: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն պետք է իրականացնի այնպիսի հակակոռուպցիոն քաղաքականություն, որը խթանում է հասարակության մասնակցությունը և արտացոլում է բարեվարքության, թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքները: Հանրային իրազեկվածությունը բարձրացնելու և էթիկական արժեքները խթանելու միջոցով կոռուպցիայի կանխարգելման

կարևորությունը ընդգծված է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի՝ պաշտոնատար անձանց վարքագծի կանոնակարգերի վերաբերյալ No. R (2000) 10 հանձնարարականում (Վարքագծի կանոնակարգերի վերաբերյալ հանձնարարական): Ոչ պետական օղակների ներգրավման կարևորությունը ճանաչվել է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում, որը կոչ է անում միջոցներ ձեռնարկել՝ խթանելու հանրային ոլորտից դուրս անհատների և խմբերի՝ քաղաքացիական հասարակության, ոչ պետական և համայնքային կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի գործում, ինչպես նաև բարձրացնելու հանրային իրազեկվածությունը կոռուպցիայի, դրա պատճառների, խնդրի կարևորության և դրանից բխող վտանգների վերաբերյալ: Առաջարկվող միջոցները ներառում են որոշումների կայացման գործընթացում թափանցիկության ապահովումը և հանրության մասնակցություն խթանելը, հանրության համար տեղեկատվության մատչելիության երաշխավորումը, հանրային իրազեկման այնպիսի միջոցառումներ ձեռնարկելը, որոնք կխթանեն կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականությունը (այդ թվում՝ հանրակրթական ծրագրերի, դպրոցական և համալսարանական ծրագրերի միջոցով), ինչպես նաև կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը հարգելը, խթանելը և պաշտպանելը:

Էլեկտրոնային կառավարում

Էլեկտրոնային կառավարում եզրույթը վերաբերում է տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառությանը (ՏՀՏ)՝ քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող հանրային ծառայությունների շրջանակը մեծացնելու ու որակը բարձրացնելու նպատակով՝ միաժամանակ դարձնելով պետական կառավարումն առավել արդյունավետ, հաշվետու, թափանցիկ: Էլեկտրոնային կառավարումը կարող է տարբեր նպատակների ծառայել՝ քաղաքացիներին տրամադրվող ծառայու-

թյունների բարելավում, բիզնեսի և արդյունաբերական ընկերությունների հետ ավելի սերտ հաղորդակցության ապահովում, քաղաքացիների կարողությունների զարգացում՝ տեղեկատվության մատչելիության միջոցով, կառավարման ավելի արդյունավետ իրականացում: Արդյունքում հնարավոր ձեռքբերումներից են քափանցիկության աճը, կոռուպցիայի կրճատումը, քաղաքացիների համար ավելի մեծ հարմարավետություն ապահովելը, եկամուտների աճը և/կամ ծախսերի կրճատումը:

Հայաստանը նույնպես ստեղծել է էլեկտրոնային կառավարման գործիքներ, որոնցից են՝

- I. www.e-gov.am կայքը («Հետևեք Ձեր նամակի ընթացքին» բաժինը), որը տնտեսվարող սուբյեկտներին և քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում առցանց հետևելու փաստաթղթերի և դիմումների ընթացքին: Կառավարություն ուղարկված գրություններին և դիմումներին կարելի է հետևել ընդհանուր հսկիչ համարով: Համակարգը ցույց է տալիս պետական կառույցներում նամակի կամ դիմումի ամբողջ ընթացքը: Քաղաքացիները և տնտեսվարող սուբյեկտները կարող են ներբեռնել իրենց դիմումների՝ էլեկտրոնային ստորագրությամբ կնքված և պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պատասխանները:
- II. «Ինտերակտիվ բյուջե» նախաձեռնությունը, որը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու պետական բյուջեն և հետևելու կատարվող ընթացիկ ֆինանսական փոփոխություններին (ըստ ոլորտների, բաժինների, խմբերի, դասերի և ծախսային տողերի), ինչպես նաև առցանց ծանոթանալու բյուջեի մուտքերին ու ծախսերին: Սա հնարավորություն է ընձեռում տեսնելու բյուջեի միջոցների հաշվին կնքված պայմանագրերի տվյալները:

- III. Մտավոր սեփականության գրանցման էլեկտրոնային համակարգը (www.aipa.am), որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային եղանակով հայտեր ներկայացնելու գյուտերի, ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների գրանցման համար: Կայքը նաև տեղեկատվություն փնտրելու հնարավորություն է ընձեռում:
- IV. Անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգը (www.e-cadastr.am), որը հնարավորություն է ընձեռում անշարժ գույքի գրանցման առցանց դիմում ներկայացնելու և դրա ընթացքին հետևելու համար:
- V. Պետական վճարումների էլեկտրոնային համակարգը (www.e-payments.am), որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային եղանակով կատարելու պետական և տեղական տուրքերի, վարչական տույժերի վճարումները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները:
- VI. Դատական համակարգի որոնողական համակարգը (www.datalex.am), որը հնարավորություն է ստեղծում փնտրելու դատական գործեր, հետևելու դատական լուծումների ժամանակացույցին, առցանց դատական հայցեր ներկայացնելու և դրանց հետագա ընթացքին հետևելու, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը դատարան առցանց ուղարկելու:
- VII. Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգը (www.arlis.am), որը ապահովում է Հայաստանի իրավական ակտերի մեծածավալ էլեկտրոնային տվյալների բազայի հասանելիությունը և հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Հայաստանի օրենսդրությանը (սկսած միջազգային պայմանագրերից մինչև ավագանու որոշումներ):

Մեծ կարևորություն է ներկայացնում նաև 2014թ-ին գործարկված ակտիվների էլեկտրոնային հայտարարագրման համակարգը, որը բարձրաստիճան պաշտոնատար անձանց հնարավորություն է ընձեռում ներկայացնելու իրենց հայտարարագրերը էլեկտրոնային համակարգի միջոցով, որից հետո դրանք պաշտոնապես հրապարակվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (<http://ethics.am/hy/declarations-registry/>): Էլեկտրոնային համակարգը տեխնիկապես միացված է պետական կադաստրի, ոստիկանության, պետական ռեզիստրի և այլ մարմինների տվյալների բազաների հետ, ինչը հնարավորություն է ստեղծում պաշտոնատար անձանց կողմից տրամադրված հայտարարագրերում ներառված տվյալների հավաստման համար:

1.2 Հասարակական կազմակերպություններ

Հասարակական կազմակերպություններն առանցքային դերակատարում ունեն կոռուպցիայի դեմ պայքարում և էական նշանակություն ունեն հանրային ոլորտում էթիկային առնչվող առկա խնդիրները բարձրաձայնելու, հանրային ծառայությունները մշտադիտարկելու, հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, կոռուպցիայի դեմ պայքարի և էթիկայի վերաբերյալ կրթություն իրականացնելու, ինչպես նաև հակակոռուպցիոն նախաձեռնությունների և օրակարգերի իրականացումը խթանելու հարցերում:

Հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածությունը ուշադրություն է հրավիրում էթիկային առնչվող խնդիրներին, ստիպում է քաղաքական որոշումներ կայացնողներին բարեփոխումներ իրականացնել, ինչպես նաև խթան է հանդիսանում փոփոխությունների համար: Որպես հասարակության ներկայացուցիչներ՝ ՀԿ-ները բարձրաձայնում են կոռուպցիայի և հանրային էթիկայի ոլորտում տիրող խնդիրների վերաբերյալ քաղաքացիների մտահոգությունները, ապահովում են հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածությունը և նպաստում, որ

Էթիկային առնչվող բարեփոխումների հարցը մնա օրակարգում: ՀԿ-ները իրականացնում են պետական հաստատությունների գործունեության մշտադիտարկման կարևոր գործառույթը՝ արդյունքների մասին հանրությանը տեղեկացնելով և անհրաժեշտության դեպքում նրանց միջոցներ ձեռնարկելու կոչ անելով:

ՀԿ-ները ակտիվորեն մասնակցում են նաև հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումների մշակմանը և իրականացմանը: Հասարակական կազմակերպությունները կարևոր դեր են իրականացնում ռազմավարության և քաղաքականության հարցերի քննարկումներ կազմակերպելու հարցում՝ դրանցում ընդգրկելով հանրության ավելի լայն շերտերի:

ՀԿ-ների գործունեության մյուս կարևոր ուղղությունը կազմակերպվող սեմինարներն ու վերապատրաստումներն են, որոնք բարձրացնում են էթիկայի արժեքների հեղինակությունը և ստեղծում կոռուպցիայի դեմ հանրային անհանդուրժողականության մթնոլորտ: ՀԿ-ները նաև տրամադրում են փորձագիտական կարծիքներ և տեղեկատվություն, հետազոտական աշխատանքներ են իրականացնում կոռուպցիային առնչվող թեմաների շուրջ:

Ի լրումն վերոնշյալի՝ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող (watchdog) ՀԿ-ները ծառայում են որպես նախազուշացման մեխանիզմներ: Դիտարկելով տարբեր պետական մարմինների ու հաստատությունների գործունեությունը և տրամադրելով իրենց վերլուծություններն ու փորձագիտական կարծիքները՝ դրանք երաշխավորում են, որ օրենքը կիրառվի արդար և ոչ խտրական ձևով:

1.3 Չանգվածային լրատվամիջոցներ

Հաշվի առնելով տեղեկատվության նկատմամբ աճող պահանջը՝ ՉԼՄ-ները դարձել են ժամանակակից կառավարման համակարգերի բաղկացուցիչ մասը: Ունենալով հասարակական կարծիք ձևավորելու կարողություն՝ լրատվամիջոցները հաճախ ընկալվում են որպես չորրորդ իշխանություն: Այդ պատճառով կառավարու-

թյունները և այլ շահագրգիռ մարմինները հաճախ օգտագործում են լրատվամիջոցները իրենց ասելիքը թիրախային լսարաններին հասցնելու և նրանց վարքագծի վրա ներգործելու համար:

ՁԼՄ-ները ցանկացած հասարակությունում կոռուպցիայի կանխարգելման և էթիկայի խթանման ամենակարևոր գործիքներից են: Դրանք կարևորագույն դերակատարություն ունեն կոռուպցիայի բացահայտման և այն որպես հասարակական խնդիր ձևակերպելու, հանրային ոլորտում էթիկայի կանոնները խթանելու, քաղաքացիներին կոռուպցիայի դեմ պայքարում օժանդակելու և էթիկայի ոլորտում բարեփոխումները խթանելու հարցերում: Ժամանակակից աշխարհում լրատվամիջոցները կատարելագործվել են նոր տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ:

Ուժեղ, անկախ և ազատ լրատվամիջոցները ծառայում են որպես միջոց՝ տարածելու կարևոր տեղեկատվություն և իրականացնելու անկախ քննադատություն: Բարձրացնելով և քննարկելով կոռուպցիայի/էթիկայի հետ կապված խնդիրներ՝ լրատվամիջոցները այդ խնդիրները դարձնում են հանրային օրակարգի առարկա, որպեսզի դրանց վրա սևեռեն տարբեր պետությունների ուշադրությունը:

Կոռուպցիային/էթիկային առնչվող խնդիրներ բարձրացնելով և քննարկելով՝ լրատվամիջոցները դրանք ներառում են հանրային օրակարգ, որպեսզի դրանց վրա բևեռեն պետական պաշտոնյաների և առյանների ուշադրությունը՝ խթանելով համապատասխան փոփոխություններ ու վերանայումներ գոյություն ունեցող քաղաքականության մեջ ու համապատասխան կարգավորումներում:

Միաժամանակ, լրատվամիջոցներն ազդում են ընկալումների վրա և դրանով իսկ ներգործում հասարակական նորմերի և մշակույթի վրա, որն էլ, իր հերթին, կարող է ազդել քաղաքականության մշակման և օրենսդրական բարեփոխումների վրա: Ուշադրություն հրավիրելով այնպիսի վարքագծի վրա, որը սովորաբար համարվում է անընդունելի և այդպիսի վարքագիծը ներկայացնելով որպես էթիկայի կանոններին հակասող և կոռուպցիայի դրսևորում՝ լրատվամիջոցները կարող են բարձրացնել հանրային իրազեկվածությունը էթիկայի արժեքների վերաբերյալ և նախաձեռնել հասարակության կողմից արտաքին ճնշման գործադրում՝ հակակոռուպ-

ցիոն և էթիկայի վերաբերյալ ավելի արդյունավետ քաղաքականություն մշակելու համար:

Լրատվամիջոցները հանդես են գալիս նաև որպես հասարակական հսկողության օղակ և կարևոր դերակատարություն ունեն հաշվետվողականության ապահովման գործում, քանի որ իրականացնում են այն մարմինների գործողությունների մոնիթորինգ և քննություն, որոնք օժտվել են հանրության վստահության քվեով և կարող են չարաշահել իրենց դիրքը անհատական շահերի համար: Կոռուպցիայի վերաբերյալ լուսաբանումը նաև ներգործություն ունի ընտրությունների արդյունքների վրա, ինչը ևս ստիպում է կատարել բարեփոխումներ և ստեղծել պայմաններ՝ էթիկային հակասող վարքագծի դրսևորումները վերացնելու համար: Մեկ այլ կարևոր գործիք է հետաքննող լրագրողների ինստիտուտը, որը բացահայտում է խախտումներ և ստիպում հետևել էթիկայի կանոններին պետական կառավարման և բիզնեսի ոլորտներում:

1.4 Կոռուպցիայի մասին իրազեկում

Ոչ էթիկական վարքագծի դրսևորումների վերհանումը հատկապես դժվարանում է այն դեպքերում, երբ իրավասու մարմիններին ոչ ոք տեղեկատվություն չի ներկայացնում: Այդ իսկ պատճառով հանրային իշխանությունները հրապարակայնության քարոզարշավների, տեղեկատվություն ներկայացնելու համար նախատեսված գործիքների (թեժ գծեր, ինտերնետային հարթակներ և հատուկ ընդունելության գրասենյակներ) օգնությամբ փորձում են խրախուսել կոռուպցիայի մասին իրազեկումը և քաղաքացիական ծառայողներին պարտավորեցնում են զեկուցել վարքագծի ոչ պատշաճ դրսևորումների մասին, որոնց վերաբերյալ իրենց հայտնի են դարձել: Հարկ է նշել, որ կոռուպցիայի կանխարգելման համակարգերում ամենազգայուն տարրերից է այն անձանց պաշտպանությունը, ովքեր տեղեկատվություն են տրամադրում ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների մասին:

Եվրոպայի խորհուրդը 2014թ. ապրիլի 30-ին ընդունել է ազդա-

րարների (whistle-blowers) պաշտպանության վերաբերյալ CM/Rec (2014) 7 հանձնարարականը: Փաստաթուղթն ընդգծում է այնպիսի նորմատիվ ակտերի առկայության կարևորությունը, որոնք պետք է արտացոլեն բազմակողմանի և համաձայնեցված մոտեցում կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու և կոռուպցիոն դեպքերը բացահայտելու գործում հանրային շահագրգռվածությունը խթանելու նկատմամբ: Այն նաև սահմանում է, որ հստակ մեխանիզմներ պետք է ստեղծվեն տեղեկատվություն տրամադրելու և բացահայտման գործում հանրային շահագրգռվածությունը խթանելու համար, և դրանց միջոցով դիմելը պետք է դյուրացվի համապատասխան գործիքներով: Փաստաթուղթը նաև հորդորում է միջոցներ ձեռնարկել ազդարարներին ցանկացած տեսակի հաշվեհարդարից պաշտպանելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հաշվեհարդարն ունի ուղղակի, թե անուղղակի դրսևորում: Նշված պաշտպանությունն իրականացվում է հենց ազդարարի գործատուի կամ այնպիսի անձի կողմից, ով աշխատում կամ գործում է գործատուի անունից: Հաշվեհարդարի դրսևորումները կարող են ներառել աշխատանքից ազատումը, լիազորությունների դադարեցումը, պաշտոնի իջեցումը, պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունների կորուստը, պատժիչ բնույթ կրող աշխատանքի տեղափոխումը, աշխատավարձի կրճատումը կամ դրանից պահումները, վիրավորանքը, ինչպես նաև այլ պատժիչ կամ խտրական վերաբերմունքի դրսևորումները:

1.5 Պաշտոնատար անչանց վերապահություն հոռուպցիայի դեմ պայքարի և էթիկայի թեմաներով

Էթիկայի հարցերով հանրային ծառայողների վերապատրաստումը պետական հաստատություններում բարեվարքություն ձևավորելու գործիքներից մեկն է, և կոռուպցիայի արդյունավետ վերահսկողությունը կապված է հանրային պաշտոնատար անձանց գիտելիքների և հմտությունների հետ: Այս առումով, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան պահանջում է, որ անդամ պետու-

թյունները ջանքեր գործադրեն՝ ընդունելու, պահպանելու և ամրապնդելու քաղաքացիական ծառայողների հավաքագրման, աշխատանքի ընդունման, աշխատանքի պահպանման, առաջխաղացման և թռչակի անցնելու համակարգերը: Կոնվենցիան կարևորում է կոռուպցիայի տեսանկյունից հատկապես խոցելի համարվող պետական պաշտոններում ընտրության և վերապատրաստման համար համապատասխան ընթացակարգեր նախատեսելը: Կոնվենցիան նաև ընդգծում է այնպիսի կրթական և վերապատրաստման ծրագրերի կարևորությունը, որոնք հնարավորություն կընձեռեն համապատասխանելու հանրային գործառույթների ճիշտ, արժանապատիվ և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ պահանջներին, ինչպես նաև պատշաճ մասնագիտական և համապատասխան վերապատրաստման միջոցով կբարձրացնեն իրազեկվածությունը գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին: Այդպիսի ծրագրերը կարող են հիմնված լինել համապատասխան ոլորտներում կիրառելի կանոնադրերի կամ վարքագծի չափորոշիչների վրա: Մովորաբար կենտրոնացված ձևով անցկացվում են էթիկայի վերապատրաստման հետևյալ ծրագրերը՝ 1. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց պաշտոնը ստանձնելու կապակցությամբ վերապատրաստում տարբեր թեմաներով, ներառյալ՝ հանրային ծառայության ոլորտի էթիկայի, 2. հանրային ոլորտի աշխատակիցների համար բարեվարքության թեմայով վերապատրաստում, 3. բարեվարքության թեմայով վերապատրաստում վերապատրաստողների համար:

2. ԷԹԻԿԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԽԹԱՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Կազմակերպության էթիկայի համակարգին և դրա արդյունավետությանը նպաստող գործիքները տարբերվում են՝ կախված տվյալ կազմակերպության աշխատանքային միջավայրից և կառավարման տեխնիկայից: Ստորև ներկայացված գործիքները որոշ դեպքերում հանրային հաստատություններին կարող են աջակցել էթիկայի չափորոշիչների կիրառման գործում:

2.1 Աշխատանքի ռոտացիա

Աշխատանքային ռոտացիան կառավարման տեխնիկա է, որով կազմակերպության աշխատակազմի անդամները տարբեր պաշտոնների են նշանակվում որոշակի ժամկետով: Այն վերահսկման մեխանիզմ է՝ բացահայտելու սխալները ու խարդախության դեպքերը, իսկ ԵՄ որոշ երկրների կառավարման մարմիններում աշխատակազմի պարբերական ռոտացիան հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման միջոց է:

Որքան բարձր է մասնագիտացման աստիճանը և որքան երկար է վերապատրաստման համար անհրաժեշտ տևողությունը, այնքան նվազում է ռոտացիայի նպատակահարմարությունը որպես կոռուպցիայի կանխարգելման գործիք: Այդպիսի դեպքերում

նախընտրելի են այլ կանխարգելիչ միջոցներ (օրինակ՝ երկակի հսկողության սկզբունքը, թափանցիկությունը և այլն):

Ռոտացիայի միջոցով աշխատակիցներին հնարավորություն է տրվում նոր ունակություններ ձեռք բերել, որոնք վերջիններիս կօգնեն առաջխաղացում ունենալու ընկերության ներսում: Ընկերության համար աշխատանքային ռոտացիան կարևոր է նաև նրանով, որ անհրաժեշտության դեպքում ընկերության կարևոր պաշտոններում նշանակումների համար կլինեն համապատասխան կարողություններ ունեցող աշխատակիցներ: Սա ընկերությանը հնարավորություն կտա ավելի արդյունավետ աշխատել և արդյունքում ավելի շահութաբեր դառնալ:

Պարբերական տեղափոխումներ. մի քանի տարի աշխատելուց հետո աշխատակիցներն իրենց զբաղեցրած պաշտոններից պարբերաբար տեղափոխվում են այլ աշխատանքի իրենց հիմնարկներում: Նման դեպքերում բախումներից խուսափելու համար տեղափոխումը պետք է իրականացվի պատշաճ ձևով: Տեղափոխման հաճախականությունը կախված է նաև կոռուպցիոն ռիսկերի աստիճանից:

Խմբի փոփոխության մոդել. այն հիմնարկները, որոնց խնդիրը տարբեր ընկերությունների հետ համագործակցելով ծրագրեր իրականացնելն է, կարող են ռոտացիան իրականացնել՝ փոխելով ծրագիր իրականացնող խմբերն այնպես, որ որևէ աշխատող շարունակաբար նույն գործընկերոջ հետ չաշխատի: Այսպիսի ռոտացիան, մասնավորապես, արդյունավետ է շինարարության ոլորտում:

Պարտականությունների բաշխման հիման վրա ռոտացիա. ռոտացիայի այս ձևով հիմնարկները կարող են պարբերաբար փոխել ստորաբաժանման հանձնարարականներն այնպես, որ պատասխանատուներ նշանակվեն տարբեր աշխատակիցներ: Այս կերպ աշխատակիցները կկարողանան պահպանել իրենց աշխատանքային միջավայրը և միաժամանակ հնարավոր կլինի կիրառել կանխարգելիչ գործիք: Ռոտացիայի այս տեսակը կարող է կիրառվել հիմնականում կառավարման մարմիններում (օրինակ՝ լիցեն-

զիաներ տրամադրող մարմիններում): Անձնակազմի հարցերով պատասխանատու ստորաբաժանումը պետք է իրականացնի աշխատակազմում ռոտացիայի նկատմամբ վերահսկողությունը: Այդ ստորաբաժանումը նաև պետք է պահպանի կենտրոնացված հաշվառում աշխատակազմում ռոտացիա պահանջող ոլորտների և աշխատակազմի համապատասխան անդամների ծառայության տևողության վերաբերյալ: Բացառիկ դեպքերում, երբ ռոտացիան աշխատանքի բնույթի կամ (անձնակազմի) կառավարման նկատառումներից ելնելով (օրինակ՝ անձնակազմում փորձագետների պակասի) հնարավոր չէ, ապա դրա փոխարեն պետք է կիրառվեն կոռուպցիայի կանխարգելման այլ միջոցներ (օրինակ՝ ավելի խորը ստուգման սկզբունքի կիրառումը, թիմերով աշխատելը և կազմակերպական ստորաբաժանումների միջև առաջադրանքներով փոխանակվելը, պարտականությունների փոխանցումը, վարչական և առաջադրանքներին առնչվող վերահսկողության խստացումը):

2.2 «Չորս աչքի» սկզբունք

«Չորս աչքի» սկզբունքը նշանակում է, որ որոշակի գործողություն, այն է՝ որոշում, գործարք և այլն, պետք է հաստատվի առնվազն երկու աշխատակիցների կողմից, և այն անփութությունից և կոռուպցիայից պաշտպանվելու գործիք է: Այս վերահսկման մեխանիզմը կիրառվում է լիազորությունների պատվիրակում իրականացնելու և թափանցիկությունը բարձրացնելու համար: «Չորս աչքի» սկզբունքը երբեմն կոչվում է «երկու մարդու» կամ «երկու անձի» կանոն: Չնայած այս սկզբունքը ապահովության տարր է ավելացնում ցանկացած որոշում ընդունելու գործընթացում, այնուամենայնիվ, դրա արդյունավետությունը կախված է այդ գործընթացում ներգրավված անհատների կարողություններից, բարեվարքությունից և ջանասիրությունից:

2.3 Մոնիթորինգ և հսկողություն

Վերջին տասնամյակում կազմակերպությունները հսկայական միջոցներ են ներդրել իրենց ներքին հսկողության համակարգերը բարելավելու համար: Այդ ներդրումները կատարվել են մի շարք պատճառներով. մասնավորապես՝ պատշաճ ներքին հսկողությունը կազմակերպություններին օգնում է երաշխավորել, որ գործառու-թային, ֆինանսական և համապատասխանության նպատակներն իրագործված լինեն: Բազմաթիվ կազմակերպություններից պահանջվում է ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ներքին հսկողության որակի վերաբերյալ զեկույցներ:

Մոնիթորինգ իրականացվում է երաշխավորելու ներքին հսկողության արդյունավետությունը: Եթե մոնիթորինգը պատշաճ է նախագծվում և իրականացվում, ապա կազմակերպությունները շահում են, քանի որ ավելի հավանական է, որ՝

- ներքին հսկողությանն առնչվող խնդիրները ժամանակին կբացահայտվեն և կուղղվեն,
- ավելի ճշգրիտ և հուսալի տեղեկատվություն կունենան որոշումներ կայացնելու գործընթացում,
- ֆինանսական հաշվետվությունները կպատրաստեն ճշգրիտ և ժամանակին,
- ի վիճակի կլինեն պարբերական հավաստիացումներ տրամադրել ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ:

2.4 Առաջնորդություն, քիմային աշխատանք և հաղորդակցություն

Կազմակերպությունում էթիկայի կարևորագույն տարրերից է առաջնորդությունը, որի վրա է հիմնվում էթիկայի տեսլականը, ոգեշնչումը և որը կազմակերպությունում արմատավորում է էթիկա-

յի արժեքներ ու ցույց տալիս ուղղություն: Կազմակերպության առաջնորդների հիմնական մտահոգությունը պետք է լինի կազմակերպության՝ էթիկային առնչվող արժեքների պահպանումը և կազմակերպության անդամների՝ էթիկայի կանոններին համապատասխան վարքագիծ դրսևորելը: Առաջնորդը համապատասխան մթնոլորտ է ստեղծում ինչպես ուղղակիորեն իր վարքագծով, այնպես էլ այն չափորոշիչների միջոցով, որոնք նա պահանջում է մյուսներից: Կազմակերպությունում թիմային աշխատանքն, իր հերթին, հնարավորություն է ընձեռում այլոց հետ կիսելու էթիկական արժեքները և տեղեկացնելու նրանց էթիկական նպատակների մասին՝ միաժամանակ թիմի անդամներին դարձնելով միմյանց հաշվետու:

Կազմակերպության կողմից էթիկական մշակույթի ձևավորման և պահպանման համար կարևորագույն միջոցներից է էթիկայի արժեքների ու սկզբունքների վերաբերյալ կազմակերպության աշխատակիցների գիտակցության մակարդակ բարձրացնելը, ինչը հնարավոր է կազմակերպության բոլոր մակարդակներում շարունակական հաղորդակցության միջոցով: Տեղեկագրերը և էլեկտրոնային գրությունները կազմակերպությունում պարբերական հաղորդակցության ձևերն են և կարևոր միջոց աշխատակիցների գիտակցության մեջ էթիկայի խնդիրները անընդհատ պահելու համար. ընդ որում՝ դրանցում պարբերաբար պետք է քննարկվեն նաև էթիկային առնչվող հարցեր:

2.5 Բողոքների / առաջարկությունների արկղ

Բողոքների/առաջարկությունների արկղը լրացուցիչ կարծիքների, հարցերի և խնդրանքների ստացման համար նախատեսված գործիք է, որն օգտագործվում է կազմակերպության հաճախորդներից և հովանավորներից գրավոր կարծիքներ հավաքելու համար: Նշված արկղի միջոցով առաջարկություններ հավաքելը կարող է արգասաբեր լինել հատկապես խմբային մտածողության հակված միջավայրում և այնպիսի ընկերություններում, որտեղ տարածված է «կրակիր տեղեկություն տվողին» մտածելակերպը: Այս գործիքը

կազմակերպության աշխատակիցներին հնարավորություն է ընձեռում մասնակցելու որոշումների կայացման գործընթացին և աշխատողներն իրենց զգում են առավել կարող և ավելի մեծ պատասխանատվության զգացում են ձեռք բերում:

Հաճախորդների համար նույնպես կարծիքներ հայտնելու հնարավորություն ստեղծելը ունի մի շարք առավելություններ: Առաջարկությունների արկղերի միջոցով հաճախորդները կարող են տրամադրել ավելի անկեղծ տեղեկություններ՝ դրանով իսկ առավել հավանական դարձնելով ճշգրիտ տեղեկությունների ձեռք բերելը, որն իր հետ կրերի հաճախորդների հետ հարաբերությունների բարելավում: Սակայն պետք է հաշվի առնել նաև, որ անանուն առաջարկությունների և չստորագրված դիմումների մեխանիզմը կարող է ստեղծել չարաշահումների և վարկաբեկումների հնարավորություն նույնպես:

Կազմակերպությանը առաջարկությունների ներկայացման հնարավորությունը նույնպես ստեղծում է քաղաքացիների սպասարկման որակի իրատեսական գնահատման մեխանիզմ՝ առանց հաճախորդների հետ անմիջական շփման: Ստացված առաջարկություններին արձագանքումը, որը կարող է դրսևորվել, օրինակ, ստացված հարցերին պատասխաններ ուղարկելով կամ ֆիզիկական կամ վիրտուալ ներկայության խնդրանքով, ևս կարող է օժանդակել՝ ուսուցանելու հաճախորդներին և բարելավելու ընկերության պատկերը, ինչպես նաև ամրապնդելու հաճախորդների հավատարմությունը:

3. ԷԹԻԿԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԶԱՓՈՐՈՇԻԶՆԵՐ

Հանրային ծառայությունում էթիկական վարքագիծ արմատավորելու հիմնական նպատակներն են կոռուպցիայի կանխարգելումը, հանրային պաշտոնատար անձանց էթիկական վարքագծի խթանումը և առավել արդյունավետ քաղաքացիներին ծառայելու հարցում պաշտոնյաներին աջակցելը՝ խթանելով պետական կառույցների նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:

3.1 Բարեվարության, հարգալից վերաբերմունքի և անկողմնակալության սկզբունքները հանրային ծառայության ոլորտում

Հանրային պաշտոնյաները պետք է հետևեն բարեվարքության, հարգալից վերաբերմունքի և անկողմնակալության սկզբունքներին: Նրանք պետք է ցուցաբերեն բարեվարքություն և դրսևորեն օրինակելի հանրային վարքագիծ: Բարեվարքությունը ժողովրդին ծառայելն է ազնիվ, արդար և անձնուրաց ձևով՝ լինելով անդրդվելի ազդեցության, իշխանության և ռեսուրսների չարաշահման բոլոր փորձությունների նկատմամբ: Իրենց պաշտոնեական գործառույթներն իրականացնելիս հանրային պաշտոնյաները պետք է դրսևորեն հարգալից, քաղաքակիրթ և բարեկիրթ վերաբերմունք քաղաքացիների, իրենց գործընկերների, ենթակաների, ինչպես

նաև այլ անհատների և խմբերի նկատմամբ, ում հետ նրանք կգտնվեն պաշտոնեական կամ հանրային հարաբերությունների մեջ: Հանրային պաշտոնյաները նաև պետք է գործեն անկողմնակալ, նրանք չպետք է արտոնյալ կամ խտրական վերաբերմունք դրսևորեն որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կախված տարիքից, ազգությունից, սոցիալական ծագումից, քաղաքական կամ կրոնական համոզմունքներից, սեռից կամ որևէ այլ հիմքով:

3.2 Շահերի բախման իրավիճակները

Շահերի բախումը ենթադրում է պաշտոնեական պարտականությունների և մասնավոր շահերի միջև բախում, երբ հանրային պաշտոնյաների մասնավոր շահերը ազդում են կամ տպավորություն են ստեղծում, թե ազդում են կամ կարող են ազդել նրա պաշտոնական պարտականությունների կատարման վրա:

Մասնավոր շահը ներառում է ցանկացած առավելության տրամադրում հանրային պաշտոնյաներին, նրանց ընտանիքին (ընտանիքի անդամներին), մերձավոր ազգականներին, ընկերների և անձանց կամ կազմակերպություններին (փոխկապակցված անձինք), որոնց հետ նրանք ունեն կամ ունեցել են տնտեսական, քաղաքական կամ այլ անձնական հարաբերություններ: Առավելությունը ներառում է ոչ միայն տրամադրված առավելությունները, այլ նաև ցանկացած բեռից կամ վնասից խուսափելը: Հանրային պաշտոնատար անձինք պետք է խուսափեն ցանկացած վնասից, որ շահերի բախման իրավիճակը կարող է պատճառել:

«Պտտվող դռան» երևույթ

Պտտվող դռան երևույթը հանրային հատվածի պաշտոնից մասնավոր հատված տեղափոխվելն է և հակառակը: Իրենց պաշտոնաթողությունից հետո հանրային պաշտոնյաները չպետք է օգտվեն իրենց նախկին պաշտոնի առավելություններից: Հանրային պաշտոնից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում հան-

րային պաշտոնյաները չպետք է բանակցեն կամ համաձայնվեն ստանձնել որևէ պաշտոն, աշխատանք կամ իրականացնեն որևէ գործունեություն այն գործատուի մոտ կամ դառնան այն կազմակերպության աշխատակից, որոնց նկատմամբ նրանք իրենց պաշտոնավարման վերջին տարում իրականացրել են անմիջական հսկողություն, ինչպես նաև չպետք է թույլ տան, որ այլ աշխատանքի հնարավորությունը ստեղծի իրենց համար փաստացի, հնարավոր կամ թվացյալ շահերի բախում: Հանրային պաշտոնյաները պետք է անմիջապես բացահայտեն աշխատանքի ցանկացած առաջարկություն, որը կարող է առաջացնել շահերի բախում և պաշտպանեն ու չբացահայտեն որևէ գաղտնի տեղեկատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրված է օրենքով:

Նվերներ

Հանրային պաշտոնատար անձինք չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջնորդեն, փնտրեն, ընդունեն կամ համաձայնվեն ընդունել ցանկացած նվեր, որը կազդի, կարող է ազդել կամ ստեղծում է տպավորություն, թե ազդում է նրանց պարտականությունների իրականացման վրա: Նվեր է հանդիսանում ֆինանսական կամ այլ տեսակի օգուտը, ներառյալ՝ ցանկացած գույքային առավելությունը, հյուրասիրությունը, օգուտը, դրամական պարգևատրումը, լավությունը, զեղչը, զվարճանքը, վարկը, վերապատրաստումը, ուղևորափոխադրումը, ճանապարհորդությունը, կացարանների և սննդի տրամադրումը կամ դրամական արժեք ունեցող որևէ միավոր, ինչպես նաև նվերներ, որոնք դրսևորվում են ծառայությունների, իրավունքներ շնորհելու կամ փոխանցելու, պարտականություններից ազատելու, իրավունքից հրաժարվելու ձևով, կամ ցանկացած այլ գործողություններ, որոնց արդյունքում օգուտ է առաջանում: Հանրային պաշտոնյաները չպետք է ընդունեն որևէ նվեր կամ այլ օգուտ, որը նրանց չէր առաջարկվի կամ տրվի, եթե իրենք չունենային իրենց պաշտոնեական դիրքով պայմանավորված կարգավիճակը, իշխանությունը կամ պարտականությունները:

3.3 Պաշտոնական դիրքի, հանրային ռեսուրսների և սեղեկատվության օգտագործումը

Հանրային պաշտոնյաները չպետք է չարաշահեն պաշտոնեական դիրքով պայմանավորված իրենց իշխանությունն ու ազդեցությունը, և այդ իշխանությունը ենթադրում է նաև այն իրենց մասնավոր շահերի համար չօգտագործելու պատասխանատվություն:

Հանրային պաշտոնյաներին իշխանությամբ օժտելը ենթադրում է պատասխանատվություն առ այն, որ կապահովվի ռեսուրսների արդյունավետ, օգտակար և հնարավորինս խնայողական կառավարում (այդ թվում՝ հայեցողական լիազորությունների իրացման դեպքերում), ինչպես նաև չի թույլատրվի ռեսուրսների օգտագործում մասնավոր շահի համար: Հանրային պաշտոնյաները պարտավոր են պատշաճ կառավարել տեղեկատվությունը և այն օգտագործել բացառապես հանրային ծառայության նպատակներով:

4. ԷԹԻԿԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴԵՊՔԵՐ

- Գեպք 1 -

Հայաստանում բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց գույքի և եկամուտների հայտարարագրերը ներկայացնելիս չեն տրամադրում իրենց ամուսինների վերաբերյալ տեղեկատվություն (վերջիններս, այս հանգամանքով պայմանավորված, նաև չեն ներկայացնում գույքի և եկամուտների հայտարարագիր) պնդելով, որ իրենց ամուսնությունը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, Հայաստանում չկա քաղաքացիական ամուսնության իրավական ինստիտուտ:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊖ բարձրաստիճան պաշտոնատար անձինք և նրանց ամուսինները
- ⊖ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով
- ⊖ էթիկայի այլ մարմիններ
- ⊖ ՀՀ Ազգային ժողով
- ⊖ հանրություն
- ⊖ լրատվամիջոցներ:

Դեպքը

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն առանձնացրել է չգրանցված ամուսնություններին առնչվող դեպքերը՝ հնարավոր լուծումները քննարկելու նպատակով: Հանձնաժողովը կապ է հաստատել բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ բացատրելու համար իրենց ամուսինների գույքի և եկամուտների հայտարարագրման անհրաժեշտությունը, ինչպես նաև տեղեկացնելու ամուսինների հայտարարագիր չներկայացնելու դեպքում՝ անմիջական բացասական ազդեցությունն պաշտոնյաների հեղինակության վրա: Անկախ պաշտոնյաների հետ տարված աշխատանքից և գործադրված ջանքերից՝ մի շարք պաշտոնյաներ, հղում կատարելով օրենսդրությանը, հրաժարվում են ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիրը:

Իրավիճակի վերլուծություն

Վերոնշյալ իրավիճակը խոչընդոտում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից առանձին պաշտոնյաների հայտարարագրերի արդյունավետ վերլուծությանը: Հանձնաժողովը նաև հնարավորություն չունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց գույքի, եկամուտների և ֆինանսական դրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն հրապարակել հանրության համար: Այսպիսի իրավիճակը խոչընդոտ է հանդիսանում Հանձնաժողովի կողմից բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկությանը և հանրային ծառայության հանդեպ վստահության ձևավորմանն ուղղված ջանքերին՝ թույլ չտալով պարզել գույքի, եկամուտների և ֆինանսական փոփոխությունները և բացահայտել բարձրաստիճան պաշտոնատար անձանց առերևույթ ապօրինի հարստացման դեպքերը:

Միաժամանակ, այս իրավիճակը վնասում է այն հաստատությունների հեղինակությանը, որտեղ աշխատում են վերոնշյալ պաշտոնատար անձինք, ինչպես նաև խաթարում է հանրային վստահությունը Հանձնաժողովի հանդեպ, որը չի կարողանում ապահովել

պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի պատշաճ ներկայացումը: Այսպիսով՝ խաթարվում է ընդհանուր առմամբ հանրային ծառայության հանդեպ վստահությունը:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

-Պեպ 2-

Մասնավոր ընկերությունը, որ ՀՀ կառավարության հետ ունի պետական մարմնի համար Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ էլեկտրոնային կայքէջ պատրաստելու պայմանագիր, պատշաճ ձևով չի իրականացրել իր պարտականությունները և չի հետևել նախապես համաձայնեցրած ժամանակացույցին: Պետական կազմակերպության ներկայացուցիչները խոսել են այդ ընկերության ներկայացուցիչների հետ՝ նշելով, որ մասնավոր ընկերությունը պետք է ավելի պատասխանատու մոտեցում դրսևորի համատեղ պայմանագրի իրականացման նկատմամբ: Պետական կազմակերպության ներկայացուցիչը նաև խստորեն պահանջել է, որ մասնավոր ընկերությունը հետևի իր աշխատանքային ժամանակացույցին:

Վերջինս նաև նշել է, որ կայքին առնչվող աշխատանքներն իրականացնող ընկերության ներկայացուցիչները ավելի պատասխանատու պետք է գտնվեն և ներկայացման նախօրոք նշանակված բոլոր հանդիպումներին, քանզի կայքէջը կազմակերպության համար հասարակության հետ հաղորդակցվելու կարևոր գործիք է և այն միաժամանակ ապահովում է պետական հաստատության գործունեության թափանցիկությունը:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ➔ պայմանագրի կողմեր (*ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ, պետական կազմակերպություն և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություն*)
- ➔ հանրություն
- ➔ լրատվամիջոցներ:

Դեպքը

Պետական գործակալությունում տեղի է ունեցել քննարկում՝ ստեղծված իրավիճակի և մասնավոր ընկերության հետ հեռախոսազանգի առնչությամբ (արդյոք պետք է կապ հաստատվեր մասնավոր ընկերության հետ, թե այլ լուծումներ պետք է գտնվեին):

Մասնավոր ընկերության կողմից պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման արդյունքում պետական գործակալությունը քննարկել է հնարավոր լուծումները: Հնարավոր տարբերակներից մեկը դոնոր կազմակերպության և Հայաստանի կառավարության հետ պայմանագիրը լուծելու վերաբերյալ քննարկումներ ձեռնարկելը կլիներ, որի դեպքում բավականին երկար ժամանակ կպահանջվեր նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություն գտնելու և կայքի ստեղծումը շարունակելու համար: Մեկ այլ տարբերակի դեպքում կարիք կլիներ դիմել դատարան՝ պայմանագրով նախատեսված ժամանակացույցին հետևելու և փոխհատուցման հարցով, որը կարող էր ոչ միայն ժամանակի կորուստ լինել, այլև թանկ արժեքով:

Իրավիճակի վերլուծություն

Կայքի ստեղծման հետ կապված լարվածություն էր առաջացել պետական կազմակերպության և մասնավոր ընկերության միջև: Մի կողմից, իրավիճակի հետագա բարդացումը և այնպիսի լուծումները, ինչպիսիք էին՝ պայմանագրի լուծումը կամ դատական ընթացակարգը, կարող էին խնդրին հաղորդել ավելի մեծ հրապարակայնություն և վնասել պետական մարմնի հանդեպ վստահությանը: Մյուս կողմից՝ մասնավոր ընկերության այլ հաճախորդներ նույնպես կարող են տուժել, եթե հայտնի չդառնա այդ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Գեպ 3 -

«Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է, որ քաղաքական զապվածության սկզբունքը հանրային ծառայության գլխավոր սկզբունքներից է: Օրենքը նաև սահմանում է, որ հանրային ծառայողներն ու բարձրաստիճան պաշտոնատար անձինք չեն կարող օգտագործել իրենց ծառայողական դիրքը քաղաքական կուսակցությունների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար:

Անկախ այս կարգավորումներից, բազմաթիվ հանրային ծառայողներ աշխատավայրերում քաղաքական ելույթներ են ունենում հատկապես ընտրությունների ժամանակ: Չնայած այսպիսի վարքագիծը քննադատության է արժանացել լրատվամիջոցների կողմից, սակայն քաղաքական կուսակցությունների ընտրարշավների մշակույթը էական փոփոխություններ չի կրել:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊖ քաղաքական կուսակցություններ
- ⊖ բարձրաստիճան պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ
- ⊖ Քաղաքացիական ծառայության խորհուրդ
- ⊖ ընտրությունները մշտադիտարկող կազմակերպություններ և մարմիններ
- ⊖ էթիկայի հանձնաժողովներ
- ⊖ հանրություն
- ⊖ լրատվամիջոցներ:

Իրավիճակի ազդեցությունը

Իրավիճակը լայնորեն լուսաբանվել և քննարկվել է լրատվամիջոցներում, սակայն: Շահագրգիռ կողմերի կարծիքները տարբերվում են միմյանցից. նրանցից ոմանք նույնիսկ քաղաքական ելույթ-

ները համարում են ընդունելի՝ այն դիտարկելով որպես խոսքի ազատության դրսևորում:

Իրավիճակի վերլուծություն

Նմանատիպ իրավիճակը կարող է բացասական ազդեցություն ունենալ հանրային ծառայությունում ընդհանուր մթնոլորտի վրա: Հանրային ծառայողի կողմից իր աշխատավայրում նկարագրված քաղաքական գործունեությունը կարող է վնասել հանրային ծառայության համակարգին և խաթարել հանրային ծառայության և պետական կառույցների նկատմամբ հանրության վստահությունը:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Դեպք 4 -

Մասնավոր ընկերությունը շոկոլադի տուփեր է ուղարկել Հաստատանի մի շարք պետական հաստատություններ՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների ամանորը շնորհավորելու նպատակով: «Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է, որ հանրային ծառայողները և բարձրաստիճան պաշտոնատար անձինք չեն կարող նվեր ընդունել իրենց պարտականություններն իրականացնելու կապակցությամբ, Հանձնաժողովը քննարկել է այն հարցը, թե արդյոք շոկոլադի տուփերն ընդունելը նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ օրենսդրության խախտում է:

Ներգրավված կողմեր/շահագրգիռ անձինք

- ⊕ պետական հաստատություններ
- ⊕ մասնավոր ընկերություն/մասնավոր հատված
- ⊕ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով
- ⊕ լրատվամիջոցների ներկայացուցիչներ
- ⊕ հանրություն:

Գեպքը և իրավիճակի վերլուծությունը

Հանձնաժողովը քննարկել է մասնավոր ընկերությունից նվերներ ընդունելու հարցը: Հանձնաժողովը հաշվի է առել իրավիճակի մանրամասները, մասնավորապես՝ մասնավոր ընկերության շուկայական և զարգացման քաղաքականությունը: Պարզվել է, որ շուկուլադի արկղերը առաջարկվում են միայն ընտրված պետական հաստատությունների, ինչը կարող է հանրության մոտ ողջամիտ կասկածներ և ընկալումներ առաջացնել այս գործողության դրդապատճառների վերաբերյալ:

Իրավիճակը կարող է սխալ ընկալվել հանրության կողմից և մասնավոր ընկերության մոտ սխալ ակնկալիքների առաջացման պատճառ դառնալ: Այդ իսկ պատճառով պետական հաստատություններ ուղարկած նվերների ընդունումը կարող է խաթարել հանրային վստահությունը և՛ պետական հաստատությունների, և՛ հանրային ծառայության հանդեպ:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Գեպք 5 -

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանափակումներ է նախատեսում հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար՝ արգելելով նրանց համատեղ աշխատել իրենց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ: Այնուամենայնիվ, այս կարգավորումն ունի բացառություն. այն չի տարածվում պատգամավորների վրա: Այսպիսի իրավիճակում Հայաստանի խորհրդարանի մի շարք անդամներ իրենց գրասենյակում աշխատանքի են ընդունում իրենց ազգականներին՝ վկայակոչելով օրենսդրությամբ սահմանված բացառությունը, ինչի պատճառով արժանանում են լրատվամիջոցների քննադատությանը:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊕ ՀՀ Ազգային ժողով
- ⊕ պատգամավորներ
- ⊕ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողով
- ⊕ ընտրողներ
- ⊕ հանրություն
- ⊕ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Դեպքը և իրավիճակի վերլուծությունը

Վերոնշյալ խնդիրը դարձել է լրատվամիջոցների և հանրային քննարկման առարկա: Այդ ընթացքում Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից գործին առնչվող հարցերը դիտարկելու վերաբերյալ դիմում է ստացել: Այդուհանդերձ, Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը իրավիճակը վերացնելու գործիք չունի, քանի որ օրենսդրական կարգավորման համաձայն՝ պատգամավորներին արգելված չէ աշխատել իրենց ազգականների հետ: Հարկ է նշել, որ քաղաքական գործիչներին առնչվող սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների միջազգային փորձը ևս խիստ չէ:

Իրավիճակը չի նպաստում Ազգային ժողովի աշխատակազմի աշխատանքի որակի բարձրացմանը և մրցունակությանը: Այն նաև չի նպաստում պատգամավորների և Ազգային ժողովի հեղինակության, ինչպես նաև պետական կառավարման համակարգի և հանրային ծառայության հանդեպ վստահության կերտմանը:

Քննարկել Կրկյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Դեպք 6 -

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը 2012 թվականին Հելսինկյան ասոցիացիայի Վանաձորի

գրասենյակի ղեկավարի կողմից Վանաձորի քաղաքապետի ղեմ վարույթ հարուցելու դիմում է ստացել: Ասոցիացիայի ղեկավարը պնդում էր, որ քաղաքապետը Վանաձորի ընտրողներին «անգիտակից» է անվանել, քանի որ առաջատար քաղաքական կուսակցությունը այդ քաղաքում պարտվել էր ընտրություններում և պահանջում էր, որ քաղաքապետի նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոց կիրառվի Վանաձորի ընտրողներին վիրավորելու համար:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊕ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով
- ⊕ Հայաստանի քաղաքական կուսակցություններ
- ⊕ Վանաձոր քաղաքի ընտրողներ
- ⊕ հանրություն
- ⊕ լրատվամիջոցներ:

Դեպքը

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը վարույթ է հարուցել և քննարկել Վանաձորի քաղաքապետի հայտարարությունը: Հանձնաժողովը գտել է, որ քաղաքապետը չի հետևել էթիկայի կանոններին և չի նպաստել վստահության ստեղծմանը այն հաստատության հանդեպ, որն ինքն է ներկայացնում, իր պաշտոնին համապատասխան վարքագիծ չի դրսևորել և հարգալից վերաբերմունք չի ցուցաբերել այն անձանց նկատմամբ, ում հետ առնչվում է իր լիազորություններն իրականացնելիս: Միաժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առել այն փաստը, որ քաղաքապետը լրատվամիջոցներով հրապարակայնորեն ներողություն է հայցել իր վստահողներից:

Իրավիճակի վերլուծություն

Քաղաքապետի վարքագիծը խիստ քննադատության է արժանացել լրատվամիջոցների կողմից: Ըստ հրապարակումների՝ այսպիսի վարքագիծը կասկածի տակ է դնում քաղաքապետի և քաղաքապետարանի, ինչպես նաև հանրային ծառայողների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների հանդեպ վստահությունը: Այնուամենայնիվ, քաղաքացիներից ներողություն խնդրելը ցույց է տալիս, որ քաղաքապետը փորձել է վերականգնել վստահությունը և ընտրողների հետ իր կապը:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Գեպ 7 -

Մշակույթի ոլորտում գործող հասարակական կազմակերպությունը կազմակերպել և ֆինանսավորել է մի ծրագիր, որի շրջանակներում Հայաստանի մարզերի ուսուցիչների համար ուսումնական ուղևորություն է նախատեսվել դեպի Բելգիա: Կազմակերպությունը մի շարք մասնակիցներ է ընտրել այդ այցին մասնակցելու համար: Կազմակերպության ղեկավարը մի ուսուցչի կողմից դեպի Բրյուսել ուղևորության մասնակիցների ցուցակում ընդգրկվելու խնդրանք է ստացել, սակայն մերժել է այն: Հաջորդ օրը կազմակերպության ղեկավարը հեռախոսազանգ է ստացել ԱԺ պատգամավորի կողմից, որը հայտնել է, որ նախորդ օրը նրան զանգահարած կինը իր մայրն է, և պահանջել է, որ վերջինս ընդգրկվի Բելգիա մեկնող ուսուցիչների խմբի մեջ:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊕ բարձրաստիճան պաշտոնատար անձինք
- ⊕ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողով
- ⊕ մշակույթի ոլորտում գործող հասարակական կազմակերպություն
- ⊕ հանրություն
- ⊕ լրատվամիջոցներ:

Գեպքը

Այս դեպքը լայնորեն քննարկվել է լրատվամիջոցների կողմից, և պետական գործիչը խիստ քննադատության է արժանացել ի շահ մերձավոր ազգականի իր պաշտոնական դիրքը չարաշահելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն փաստը, որ պաշտոնատար անձն ընտրովի պաշտոն է զբաղեցնում, նա միայն արժանացել է հրապարակային պարսավանքի լրատվամիջոցների կողմից: Մի խումբ խորհրդարանականներ աջակցել են իրենց գործընկերոջը՝ ասելով, որ վերջինիս կողմից պաշտոնական դիրքի չարաշահման վերաբերյալ ապացույցներ չկան, և, որ նրանք չեն հավատում, թե իրենց գործընկերը կարող էր սխալ վարքագիծ դրսևորել:

Իրավիճակի վերլուծություն

Ստեղծված իրավիճակի բացասական հետևանքներից է պետական մարմնի և հանրային ծառայության հանդեպ վատասության խաթարումը: Այսպիսի վարքագծի դրսևորումը նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի խախտում է:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Գեպք 8 -

Լրատվամիջոցներն ակտիվորեն քննարկել են միջազգային քաղաքական միջոցառմանը Հայաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցության դեպքը, քանի որ մտահոգություն կար, թե ԱՄՆ մեկնելու ճանապարհորդությունը ֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեի հաշվին, և Հայաստանի պատվիրակության անդամները նշված գազաթնաժողովին մասնակցել են որպես կուսակցության անդամներ, այլ ոչ որպես պետության ներկայացուցիչներ:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ➔ քաղաքական կուսակցություններ

- քաղաքական որոշում կայացնողներ և կառավարություն
- բարձրաստիճան պաշտոնատար անձինք
- հանրություն
- լրատվամիջոցներ
- էթիկայի հանձնաժողովներ:

Դեպքը և իրավիճակի վերլուծությունը

Իրավիճակի վերաբերյալ եղել են լրատվամիջոցների մի շարք հրապարակումներ, քննարկումներ այն մասին, թե արդյոք քաղաքական գործիչները հրավիրված են եղել նշված գազաթնաժողովին որպես ՀՀ ներկայացուցիչներ, թե կուսակցության անդամներ: «Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է, որ քաղաքական որոշում կայացնողները չպետք է օգտագործեն հանրային ռեսուրսները ի շահ քաղաքական կուսակցությունների: Դա խաթարում է քաղաքական կուսակցությունների, պետական հաստատությունների և ընդհանրապես՝ Հայաստանի հանրային ծառայության հեղինակությունը:

Քննարկել տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

- Դեպք 9 -

Լրատվամիջոցներն իրենց հրապարակումներում մեղադրում են հանրային ծառայողներին և բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և դրանով հանրային ծառայության ոլորտի՝ գործունեության սահմանափակումների վերաբերյալ օրենսդրության պահանջների խախտման մեջ: Չնայած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին՝ հանրային ծառայողները և բարձրաստիճան պաշտոնատար անձինք հաճախ տարբեր ձեռնարկություններ են ներկայացնում՝ ներկա գտնվելով բացման արարողություններին, պայմանագրերի ստորագրմանը և այլ պաշտոնական միջոցառումներին:

Լրատվամիջոցների հրապարակումներով վերջերս պարզվել է, որ ընտրված պաշտոնատար անձը մասնակցում էր նորակառույց գործարանի բացման պաշտոնական արարողությանը և, ավելի ուշ նա պնդում էր, որ պարզապես ներկա է գտնվել միջոցառմանն, ինչպես մյուսները:

- Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊖ հանրային ծառայողներ և բարձրաստիճան պաշտոնատար անձինք
- ⊖ էթիկայի հանձնաժողովներ
- ⊖ հանրություն
- ⊖ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Իրավիճակի վերլուծություն

«Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է, որ հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ներառյալ՝ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը, առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

Էթիկայի հանձնաժողովը քննարկել է նշված իրավիճակը: Այս իրավիճակում, երբ չկան նմանատիպ վարքագծի համար նախատեսված հստակ կարգավորումներ, պատասխանատվության միջոցներ, դժվար կլինի ապահովել օրենսդրության կիրառությունը և պաշտոնատար անձանց զերծ պահել դրա պահանջները խախտելուց: Ավելին՝ չկան անհրաժեշտ իրավական գործիքներ պաշտոնատար անձանց կապը տարբեր բիզնեսների հետ ապացուցելու համար, քանի որ նրանք այդ բիզնեսների գրանցված սեփականատերերը չեն:

Քննարկել ԿՐՎՅԱԿ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԿՆԱՐԱՎՈՐ լուծումները:

- Գեպ 10-

Հայաստանում հանրային ծառայողները և բարձրաստիճան պաշտոնատար անձինք հաճախ են օգտագործում իրենց ծառայողական մեքենաները ընտանեկան կարիքները հոգալու համար: Այս սովորույթը առաջ է եկել դեռևս խորհրդային տարիներից և ինչ-որ չափով ընկալվում է որպես «նորմ»: Ավելին՝ այս ավանդույթը նախկին խորհրդային երկրներում, նաև Հայաստանում համարվում էր որպես պատասխանատու բարձր պաշտոն գրադեցնելու ամենակարևոր «առավելություններից» մեկը:

Մինչդեռ «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ նյութատեխնիկական, ֆինանսական և այլ միջոցները, ինչպես նաև գործունեությունն իրականացնելու համար տրամադրված պետական գույքը բացառապես պետք է օգտագործվեն ծառայողական նպատակներով: «Հանրային ծառայության մասին» օրենքով նաև արգելվում է ոչ ծառայողական նպատակներով հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցների, պետական կամ համայնքային գույքի և ծառայողական տեղեկատվության օգտագործումը:

Ներգրավված կողմեր /շահագրգիռ անձինք

- ⊕ բարձրաստիճան պաշտոնատար անձինք
- ⊕ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով
- ⊕ էթիկայի հանձնաժողովներ
- ⊕ Խորհրդարան
- ⊕ հանրություն
- ⊕ լրատվամիջոցներ:

Իրավիճակի վերլուծությունը

Վերոնշյալ կարգավորումները և օրենքով սահմանված էթիկայի կանոնները նպատակ ունեն ապահովելու հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց պատշաճ վարքագիծ և ամրապնդելու հանրային հաստատությունների հանդեպ վստահությունը: Էթիկայի հանճնաժողովը քննարկել է ոչ ծառայողական նպատակներով հանրային միջոցներն օգտագործելու փաստը, օրինակ՝ ընտանիքի կարիքները հոգալու նպատակով ծառայողական մեքենաներն օգտագործելը, ինչը լայնորեն քննադատվել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և լրատվամիջոցների կողմից:

Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից պետական գույքի ոչ արդյունավետ օգտագործումը և պաշտոնեական դիրքի չարաշահումը կանխելու կարևորության վերաբերյալ քննարկումները հասարակության համար դարձել են կարևոր հարց: Հանրային պաշտոնատար անձանց կողմից հանրային ռեսուրսների օգտագործումը վնաս է պատճառում հանրային պաշտոնյաների և պետական հաստատությունների հեղինակությանը և, միաժամանակ, ընդհանուր առմամբ խաթարում հանրային ծառայության հանդեպ վստահությունը:

Քննարկելի տվյալ իրավիճակում հնարավոր լուծումները:

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

հանրային ծառայության ոլորտի
էթիկայի վերաբերյալ

Տղազրվել է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:

Printed in Armenia
by Tigran Mets Publishing House.
2016